ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
2021, № 2, 32-46 *Կառավարում*
https://doi.org/10.46991/BYSU:G/2021.12.2.032

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ*

ԿԱՌԼԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վերջին տասնամյակներում պետության կայացածության մասին քննարկումներն արդիական են դարձել՝ պայմանավորված պետության գործառույթների արդյունավետ իրականացման անհրաժեշտությամբ, պետության և հասարակության առջև ծառացած խնդիրների լուծման հրատապությամբ: Տարբեր հետազոտողներ և կառույցներ պետության կայացածության աստիճանի որոշման տարբեր մոտեցումներ են առաջարկում՝ կիրառելով տարբեր ցուցանիշներ և համաթվեր: Սույն հոդվածում քննարկվել են պետության կայացածության մակարդակի գնահատման ամենից տարածված մոտեցումներից երեքը՝ պետության անգործունակության համաթիվը, կոռուպցիայի ընկալման համաթիվը և գլոբալ մրցունակության համաթիվը: Վերլուծությունների արդյունքում պարզ է դարձել, որ պետության անգործունակության ցուցիչով Հայաստանի Հանրապետության դիրքը վերջին 6 տարում չի փոխվել, կոռուպցիայի ընկալման համաթվի առումով վերջին 2 տարիներին որոշակի առաջընթաց է արձանագրվել՝ պայմանավորված 2018 թ. քաղաքական իրադարձություններով, իսկ գլոբալ մրցունակության համաթվի առումով Հայաստանի Հանրապետության դիրքերը թուլանում են «տեղեկատվական տեխնոլոգիաներ», «առողջապահություն», «կրթություն», «ապրանքների շուկա» և «նորարարության կարողություն» ենթացուցիչների մասով:

Բանալի բառեր – *պետության կայացածություն, տնտեսական քաղաքականություն, պետական կարգավորում, պետության անգործունակության համաթիվ, կոռուպցիայի ընկալման համաթիվ, գլոբալ մրցունակության համաթիվ*

Վերջին տասնամյակներում սոցիալական ու տնտեսական զարգացման բազմաբնույթ խնդիրների լուծման գործում ակնհայտորեն մեծանում է պետության դերը: Ներկայումս պետության կայացածության և կարողությունների մասին քննարկումներն արդիական են դարձել՝ պայմանավորված պետության գործառույթների արդյունավետ իրականացման անհրաժեշտությամբ, պետության և հասարակության առջև ծառացած խնդիրների լուծման հրատապությամբ:

Պետության կայացածության հասկացությունը հետազոտողներին սկսել է հետաքրքրել դեռևս 20-րդ դարի երկրորդ կեսին: Պետության

* *Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ՝* 19YR-5B030 *ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:*

դերի կարևորության վերաբերյալ ուսումնասիրությունները կարելի է բաժանել երկու փուլի. 1960-ականներին կապիտալիստական պետությունների վերաբերյալ նեոմարքսիստական տեսության ձևավորում և 1970-1990-ականներ՝ պետության ինստիտուցիոնալ տեսության վերաարժևորում[1]:

Ներկայումս պետության կայացածության խնդիրների և տարբեր ասպեկտների ուսումնասիրության ժամանակ առանձնակի ուշադրություն է դարձվում պետության կայացածության պայմանների ու առանձնահատկությունների քննարկմանը, ինչպես նաև վերջինիս դինամիկ փոփոխությունների վրա ազդող գործոնների և պարամետրերի վերլուծությանը: Այս առումով տարբեր հետազոտողներ և կառույցներ պետության կայացածության աստիճանի որոշման տարբեր մոտեցումներ են առաջարկում՝ կիրառելով տարբեր ցուցանիշներ և համաթվեր: Ստորև ներկայացնում ենք պետության կայացածության մակարդակի գնահատման ամենից տարածված մոտեցումներից երեքը՝ հիմնված Խաղաղության հիմնադրամի, «Թրանսփարենսի ինթերնեշնլ» միջազգային կազմակերպության և Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հաշվարկվող ցուցիչների վրա:

Աղյուսակ 1

Պետության կայացածության գնահատման որոշ համաթվեր

Կազմակերպություն	Համաթիվ
Խաղաղության հիմնադրամ	Պետության անգործունակության համաթիվ (Fragile States Index)
Թրանսփարենսի ինթերնեշնլ	Կոռուպցիայի ընկալման համաթիվ (Corruption Perception Index)
Համաշխարհային տնտեսական համաժողով	Գլոբալ մրցունակության համաթիվ (Global competitiveness index)

Պետության անգործունակության համաթիվը հաշվարկվում է 178 երկրների համար և չափվում է 0-120 բալային սանդղակով: Վարկանիշը կազմվում է 12 ցուցանիշների միավորների հանրագումարի միջոցով: Յուրաքանչյուր ցուցանիշ գնահատվում է 0-ից 10 բալային համակարգով, որից 0-ն ամենացածր ինտենսիվությունն է (ամենակայունը), իսկ 10-ը՝ ամենաբարձր ինտենսիվությունը (նվազ կայունը): Արդյունքում ստացվում է 0-120 միավորային միջակայքով սանդղակ, որում ցուցանիշի բարձր լինելը նշանակում է պետության կայացածության ցածր մակարդակ:

[1] Տե՛ս **Jessop, B.**, Bringing the state back in (yet again): Reviews, revisions, rejections, and redirections, International Review of Sociology, 2001, 11(2), էջ 149-173:

Գծապատկեր 1

Պետության անգործունակության համաթվի ցուցանիշների համախումբը



Պետության անգործունակության համաթիվը հաշվարկվում է չորս խումբ ցուցանիշների հանրագումարի միջոցով: Դրանք են համախմբման, տնտեսական, քաղաքական ու սոցիալական և ինտեգրման ցուցանիշների խմբերը, որոնք իրենց հերթին բաղկացած են մի քանի միկրոցուցիչներից[2] (տե՛ս գծապատկեր 1):

Համաձայն Խաղաղության հիմնադրամի տարեգրքերի՝ վերջին հինգ տարիների ընթացքում պետության անգործունակության համաթվով աշխարհում առաջատար է Յեմենը՝ որպես ամենափխրուն կայունությամբ երկիր, իսկ Ֆինլանդիան ամենաբարձր կայունությամբ երկիրն է (տե՛ս գծապատկեր 2): Թեև Հայաստանը գտնվում է նախազգուշացվող երկրների ցանկում, այդուհանդերձ տարածաշրջանում առաջատար դիրք է գրավում: Հայաստանին զիջում է նաև ՌԴ-ն, որտեղ անգործունակության համեմատաբար բարձր մակարդակին նպաստում են անվտանգության մարմինների, պառակտված էլիտաների, խմբային բողոքների, պետական լեգիտիմության ու մարդու իրավունքների և օրենքի գերակայության բացակայության ենթացուցիչների

[2] Տե՛ս Fragile States Index 2021 – Annual Report, The Fund for Peace, 2021, էջ 40:

բարձր գնահատականները[3]: Խաղաղության հիմնադրամի 2019 թվականի տարեգրքում նշվում է, որ Հայաստանը Վրաստանի հետ համարվում է տարածաշրջանի առավել ժողովրդավարական երկիրը, և որ ժողովրդավարության զարգացմանն ուղղված քայլերի շնորհիվ մեր տարածաշրջանի նկատմամբ լավատեսություն կա[4]:

Գծապատկեր 2

Պետության անգործունակության համաթիվը որոշ երկրների համար 2017-2020թթ.[5]



Համաձայն պետության անգործունակության համաթվի 2020 թվականի հաշվետվության՝ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է նախազգուշացվող երկրների ցանկում և Գանայի հետ կիսում է 108-րդ հորիզոնականը՝ 64,2 անգործունակության համաթվով: Վերջին 15 տարում այս համաթվի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետությունում իրավիճակը թեև որոշակիորեն բարելավվել է, այդուհանդերձ ցուցանիշը շարունակում է բարձր լինել, ուստի անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել դրա նվազեցման ուղղությամբ (տե՛ս գծապատկեր 3):

[3] Տե՛ս https://fragilestatesindex.org/country-data/
[4] Տե՛ս Fragile States Index 2019 – Annual Report, The Fund for Peace, 2019, էջ 29-30:
[5] Տե՛ս Fragile States Index - Annual Reports, 2017-2020:

Գծապատկեր 3

Պետության անգործունակության համաթիվը ՀՀ-ում 2006-2020 թթ.[6]



Աղյուսակ 2-ում ներկայացված է պետության անգործունակության համաթվի բաղադրիչների արժեքները ՀՀ-ում 2015-2020 թթ. համար: Դատելով աղյուսակ 4-ի տվյալներից՝ Հայաստանի Հանրապետությունում վերջին 15 տարում իրավիճակը բարելավվել է «Անհամաչափ զարգացում», «Ուղեղների արտահոսք», «Պետական լեգիտիմություն», «Հանրային ծառայություններ», «Ժողովրդագրական ճնշումներ» և «Փախստականներ ու տեղահանվածներ» ենթացուցիչների գծով: Հատկապես մտահոգիչ է «Անվտանգության մարմիններ», «Պառակտված վերնախավ», «Տնտեսական անկում», «Մարդու իրավունքների և օրենքի գերակայություն» ցուցիչների դինամիկան: Այս իմաստով, կարծում ենք, որ պետական քաղաքականության հիմքում առաջնահերթ պետք է դրվի անվտանգային խնդիրների լուծումը:

[6] Տե՛ս Fragile States Index - Annual Reports, 2006-2020:

Աղյուսակ 2

Պետության անգործունակության ցուցիչների միտումը ՀՀ-ում 2015-2020 թթ.[7]

Տարի	2015	2016	2017	2018	2019	2020
Դիրքը	108	109	102	102	105	108
Ընդհանուր ցուցիչը	69,7	69,6	71,0	69,5	66,7	64,2
Անվտանգության մարմիններ	5,3	5,0	5,5	5,2	4,9	5,2
Պառակտված վերնախավ	7,0	7,0	7,4	7,4	7,4	7,0
Խմբերի բողոք	5,4	5,6	6,1	5,8	5,5	5,0
Տնտեսական անկում	6,0	6,5	6,3	6,6	6,5	6,2
Անհամաչափ զարգացում	5,0	4,7	4,5	4,2	3,9	3,6
Ուղեղների արտահոսք	6,0	5,9	6,2	6,1	6,4	6,5
Պետական լեգիտիմություն	7,0	7,2	7,6	8,1	7,1	6,6
Հանրային ծառայություններ	4,1	3,8	3,6	3,4	3,3	3,3
Մարդու իրավունքների և օրենքի գերակայություն	6,5	7,0	7,0	6,9	6,6	6,3
Ժողովրդագրական ճնշումներ	3,6	3,3	3,1	2,8	2,5	2,4
Փախստականներ ու տեղահանվածներ	7,0	6,7	7,0	6,7	6,4	6,1
Արտաքին միջամտություն	6,8	6,9	6,7	6,4	6,3	6,0

Հարկ է շեշտել, որ այս 2020 թ. ցուցանիշները գնահատվել են մինչև Արցախյան 44-օրյա պատերազմը, այսինքն՝ մինչ պատերազմը իրականացված գնահատումներն անգամ ակներև ցույց են տալիս, որ անվտանգային բաղադրիչի մասով խնդիրներ կան: Հասկանալի է, որ հետպատերազմյան շրջանում այս խնդիրն ավելի սուր է դրված և ավելի հրատապ լուծում է պահանջում: Տնտեսական ցուցիչների մասով ևս խնդիրները ցցուն են, ուստի պետական տնտեսական քաղաքականությունը պետք է միտված լինի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների բարելավմանը:

[7] Տե՛ս Fragile States Index - Annual Reports, 2015-2020:

Կոռուպցիայի ընկալման համաթիվը, որը 1995 թ.-ից տարեկան հրապարակում է «Թրանսփարենսի ինթերնեշնլ» միջազգային կազմակերպությունը, դասակարգում է երկրները ըստ պետական հատվածի կոռուպցիայի մակարդակի, որը որոշվում է փորձագիտական գնահատումների և հասարակական կարծիքի ուսումնասիրությունների միջոցով: Կոռուպցիայի ընկալման համաթիվը կոռուպցիան սահմանում է որպես «հանրային իշխանության չարաշահում՝ անձնական շահի համար»[8]: 2020 թ. զեկույցի համաձայն՝ ՀՀ-ն 49 միավոր ցուցանիշով գտնվում է 60-րդ տեղում և նախորդ տարվա համեմատ բարելավել է իր դիրքը 7 միավորով:

Գծապատկեր 4-ում ներկայացված է կոռուպցիայի ընկալման համաթվի դինամիկան ՀՀ-ում 2012-2020 թվականների համար: Գծապատկերից երևում է, որ դրական միտում է նկատվում վերջին 2 տարում: Եթե 2012-2018 թթ. կոռուպցիայի ընկալման համաթիվը գրեթե չի փոխվել, ապա 2019-2020 թթ. այն առաջընթաց է գրանցել:

Գծապատկեր 4

Կոռուպցիայի ընկալման համաթիվը ՀՀ-ում 2012-2020 թթ.[9]



Գծապատկեր 5-ում ներկայացված է կոռուպցիայի ընկալման համաթվի դինամիկան տարածաշրջանի երկրներում: Ինչպես երևում է գծապատկերից, տարածաշրջանում լավագույն ցուցանիշը Վրաստանն է արձանագրել, իսկ Իրանը՝ վատագույնը:

[8] CPI 2010: Long methodological brief, p. 2.

[9] Տե՛ս Corruption Protection Index - Annual Reports, Transparency International, 2012-2020:

Գծապատկեր 5

Կոռուպցիայի ընկալման համաթվի դինամիկան որոշ երկրների համար 2017-2020 թթ.[10]



2021 թվականի հունվարին հրապարակված 2020 թվականի կոռուպցիայի ընկալման համաթվի ցուցանիշների համաձայն՝ Դանիան, Ֆինլանդիան, Նոր Զելանդիան, Շվեդիան, Սինգապուրը և Շվեյցարիան կազմում են աշխարհի ամենաքիչ կոռումպացված պետությունների վեցնյակը և միջազգային ֆինանսական թափանցիկության բարձր մակարդակ ունեն, իսկ աշխարհում ամենակոռումպացված երկիրը Սոմալին է՝ 2012 թվականից սկսած վաստակելով 100-ից ընդամենը 8-10 միավոր[11]: Հարավային Սուդանը, որտեղ սոցիալական և տնտեսական անընդհատ ճգնաժամեր են, նույնպես ընկալվում է որպես աշխարհի ամենակոռումպացված երկրներից մեկը. 2018 թ. կոռուպցիայի ընկալման համաթիվը կազմել է 13[12]:

Կոռուպցիայի ընկալման տնտեսական հետևանքներին նվիրված հետազոտությունները փաստում են, որ առկա է փոխկապակցվածություն կոռուպցիայի ընկալման համաթվի բարձր մակարդակի և երկարաժամկետ տնտեսական աճի միջև[13]: Վերլուծություններից պարզ է դառնում, որ կոռուպցիայի ընկալման համաթվի ավելի բարձր ցուցանիշը նպաստում է նաև օտարերկրյա ներդրումների ծավալի ավելացմանը:

---

[10] Տե՛ս Corruption Protection Index - Annual Reports, Transparency International, 2017-2020:

[11] Տե՛ս Corruption Protection Index 2017, Transparency International, էջ 7:

[12] Տե՛ս Corruption Protection Index 2018, Transparency International, էջ 4:

[13] Տե՛ս **Shao J., Ivanov P., Podobnik B., Stanley H.,** Quantitative relations between corruption and economic factors, The European Physical Journal, 2007, B.56, էջ 157-166:

Գլոբալ մրցունակության համաթվի մեթոդաբանության հիմքում ընկած է այն գաղափարը, որ մարդկության զարգացման անհրաժեշտ պայմանը արտադրողականության աճն է, որը թույլ է տալիս ապահովել կայուն և երկարաժամկետ տնտեսական աճ:

Գլոբալ մրցունակության համաթիվը հաշվարկվում է 103 ցուցանիշների միջինացված հաշվարկման հիման վրա, ինչը հնարավորություն է տալիս հասկանալու երկրների արտադրողականության ու մրցունակության աստիճանը: Այդ ցուցանիշներն ունեն չափման տարբեր միավորներ, այդ իսկ պատճառով յուրաքանչյուր ցուցանիշի արժեքն առանձին մեթոդաբանությամբ փոխակերպվում է 0-100 միավորի, որտեղ 0-ն վատագույն արժեքն է, 100-ը՝ լավագույն: Այնուհետև բոլոր ցուցանիշներն առանձնացվում են 12 ենթացուցիչների մեջ: Համաշխարհային տնտեսական համաժողովի զեկույցի մեթոդաբանությունը հիմնվում է այդ 12 ենթացուցիչների վրա.

1.Ինստիտուտներ	7.Ապրանքների շուկա
2.Ենթակառուցվածքներ	8.Աշխատանքի շուկա
3.Տեղեկատվական տեխնոլոգիաներ	9.Ֆինանսական համակարգ
4.Մակրոտնտեսական կայունություն	10.Շուկայի մեծություն
5.Առողջապահություն	11.Գործարարության ակտիվություն
6.Կրթություն	12.Նորարարության կարողություն

Նշված 12 ենթացուցիչների միջինացված հանրագումարի հիման վրա է ստացվում զեկույցում ընդգրկված յուրաքանչյուր երկրի վարկանիշային ամփոփ ցուցանիշը[14]: Այս ենթացուցիչները կարելի է տրոհել 4 խմբի՝ նպաստավոր միջավայր, մարդկային կապիտալ, շուկաներ և նորարարություններ (տե՛ս գծապատկեր 6):

[14] Տե՛ս The Global Competitiveness Report 2019, World Economic Forum, 2019, էջ 631-652:

Գծապատկեր 6

Գլոբալ մրցունակության 12 ենթացուցիչներն ըստ ենթախմբերի



Համաշխարհային տնտեսական համաժողովի հրապարակած Գլոբալ մրցունակության զեկույցում 2019 թվականին Հայաստանի Հանրապետությունը բարելավել է իր մրցունակության ցուցանիշը 1.42 միավորով՝ նախկին 59.86 միավորի փոխարեն 2019 թ. արձանագրելով 61.28 միավոր: Արդյունքում ՀՀ-ն 141 երկրների շարքում 2019 թ. զբաղեցրել է 69-րդ հորիզոնականը՝ նախորդ տարվա 140 երկրների շարքում 70-րդ հորիզոնականի փոխարեն:

Հայաստանը առաջին անգամ Գլոբալ մրցունակության զեկույցում ընդգրկվել է 2005 թ.՝ 117 երկրների շարքում զբաղեցնելով 79-րդ հորիզոնականը: 2011-2013թթ. Հայաստանը բարելավել է իր դիրքերը, այնուհետև թեև 2014 թվականին ՀՀ-ն կրկին ունեցել է դիրքի անկում, սակայն արդեն սկսած 2015-ից դիտարկվող երկրների շարքում բարելավում է արձանագրվել (տե՛ս գծապատկեր 7):

Փաստացի ստացվում է, որ վերջին հինգ տարում ՀՀ-ն բարելավել է իր դիրքերը 13 հորիզոնականով, իսկ վերջին տասը տարում՝ 29 հորիզոնականով:

Գծապատկեր 7

Գլոբալ մրցունակության համաթվով ՀՀ դիրքը 2010-2019 թթ.[15]



Թեև 2019 թ. նախորդ տարվա համեմատությամբ մրցունակության 12 ենթացուցիչներից միայն երեքի՝ «առողջապահություն», «կրթություն» և «ապրանքների շուկա» ենթացուցիչների դեպքում է Հայաստանն ըստ միավորների գրանցել հետընթաց՝ համապատասխանաբար 2.0, 0.8 և 2.1 միավորներով, այդուհանդերձ Հայաստանը նախորդ տարվա համեմատությամբ հինգ ենթացուցիչների մասով արձանագրել է դիրքերի վատթարացում՝

- տեղեկատվական տեխնոլոգիաներ - երեք հորիզոնականով,
- առողջապահություն - յոթ հորիզոնականով,
- կրթություն - վեց հորիզոնականով,
- ապրանքների շուկա - հինգ հորիզոնականով
- նորարարության կարողություն - երկու հորիզոնականով:

Իսկ «շուկայի մեծություն» ենթացուցչի դեպքում թեև միավորով ՀՀ-ն ունի առաջխաղացում (0.8 միավորով), սակայն նախորդ տարվա համեմատությամբ ՀՀ դիրքերը չեն փոխվել (118-րդ հորիզոնական): Մնացած ենթացուցիչների դեպքում («ինստիտուտներ», «ենթակառուցվածքներ», «մակրոտնտեսական կայունություն», «աշխատանքի շուկա», «ֆինանսական շուկա», «գործարար ակտիվություն») ՀՀ-ն արձանագրել է ինչպես միավորի, այնպես էլ դիրքի բարելավում:

ՀՀ-ն 2019 թ. ամենալավ դիրքում է գտնվում «աշխատանքի շուկա»

[15] 2018 թվականից Համաշխարհային տնտեսական համաժողովը գլոբալ մրցունակության համաթվի հաշվարկման համար սկսել է կիրառել նոր մեթոդաբանություն, ինչը մատնանշելու համար համաթիվը կոչվել է «Գլոբալ մրցունակության համաթիվ 4.0: Գծապատկերում արտացոլված են մինչև 2017 թ. նախկին մեթոդաբանությամբ հաշվարկված համաթվերը, իսկ 2018-2019 թթ. հաշվարկը իրականացվել է նոր մեթոդաբանությամբ, այդ իսկ պատճառով 2005-2017 թթ. և 2018-2019 թթ. գլոբալ մրցունակության համաթվի միավորները միմյանց համադրելի չեն:

ենթացուցիչով, իսկ միավորներով լավագույն արդյունք է գրանցել «առողջապահություն» ենթացուցիչով: Ըստ դիրքի բարելավման՝ 2019 թ. նախորդ տարվա համեմատությամբ ՀՀ-ն լավագույն արդյունք է գրանցել «մակրոտնտեսական կայունություն» ենթացուցիչով՝ բարելավելով իր դիրքերը 25 հորիզոնականով:

Աղյուսակ 3

ՀՀ գլոբալ մրցունակության համաթիվը 2017-2019 թթ.
(համաձայն ԳՄԻ 4.0-ի)[16]

Ցուցանիշներ	Միավոր		
	2017	2018	2019
Գլոբալ մրցունակության համաթիվ 4.0	58,85	59,86	61,3
1. Ինստիտուտներ	52,88	54	56,2
2. Ենթակառուցվածքներ	65,92	66,3	69,4
3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ	54,88	59,2	62
4. Մակրոտնտեսական կայունություն	74,57	72,4	75
5. Առողջապահություն	81,76	82,7	80,7
6. Կրթություն	67,19	67,6	66,8
7. Ապրանքների շուկա	58,25	61,2	59,1
8. Աշխատանքի շուկա	64,91	65	66,4
9. Ֆինանսական համակարգ	53,08	54,2	60,2
10. Շուկայի մեծություն	35,59	36,7	37,5
11. Գործարարության ակտիվություն	60,00	60,2	62,5
12. Նորարարության կարողություն	37,18	38,8	37,4

Գլոբալ մրցունակության համաթվի համաշխարհային միջինացված ցուցանիշը 2019 թվականին կազմում է 59.9 միավոր: Հայաստանն իր 61.3 միավորով փաստորեն ունի համաշխարհային միջինից բարձր ցուցանիշ:

[16] Տե՛ս The Global Competitiveness Report, Annual Reports, World Economic Forum, 2017-2019:

Գծապատկեր 8

2019 թ. գլոբալ մրցունակության համաթիվ 4.0-ի տարածաշրջանային միջին արժեքները և Հայաստանի գնահատականը[17]



Հայաստանը 2019 թվականին նախորդ տարվա համեմատությամբ ցուցանիշների բարելավման շնորհիվ առաջ է անցել մեր հարևան Վրաստանից, որը 60.6 միավորով 74–րդն է: Դրան նպաստել է նաև այն փաստը, որ 2019թ. Գլոբալ մրցունակության համաթվի զեկույցում Վրաստանը գրանցել է դիրքի հետընթաց 8 հորիզոնականով:

Գծապատկեր 9

Գլոբալ մրցունակության համաթիվ 4.0-ի՝ Հայաստանի և հարևան երկրների դիրքերը, 2019 թ.[18]



[17] Տե՛ս The Global Competitiveness Report 2019, World Economic Forum, 2019, էջ 12:
[18] Տե՛ս The Global Competitiveness Report 2019, World Economic Forum, 2019, էջ 15:

2019 թ. մեր հարևան երկրների համեմատությամբ Հայաստանը առավել մրցունակ է նաև Իրանից (53.0 միավոր, 90-րդ հորիզոնական)։ Մեր մյուս երկու հարևանները՝ Ադրբեջանը (62.7 միավոր, 58-րդ հորիզոնական) և Թուրքիան (62.1 միավոր, 61-րդ հորիզոնական), առաջ են անցել Հայաստանից։ Ադրբեջանը 2018-2019 թթ. շեշտակի վերելք է գրանցել՝ 69-րդից տեղափոխվելով 58-րդ դիրք։

Գլոբալ մրցունակության մասին 2019 թվականի զեկույցում Համաշխարհային տնտեսական համաժողովը 141 երկրներում չափված 103 ցուցանիշների հիման վրա աշխարհի ամենամրցունակ երկիր համարեց Սինգապուրը. 100 հնարավորից ստացել է 84.8 միավոր։ ԱՄՆ-ն, որը նախորդ տարի առաջատարի դիրքում էր, մրցունակության ցուցանիշով զբաղեցրել է երկրորդ հորիզոնականը (83.7 միավոր)։ Լավագույն հնգյակում են նաև Հոնկոնգը (83.1 միավոր), Նիդերլանդները (82.4 միավոր) և Շվեյցարիան (82.3 միավոր)։ Իսկ ամենից ոչ մրցունակ երկիրը Չադն է՝ 35.1 միավորով։ Վատագույն ցուցանիշներ են դրսևորել նաև Եմենը (35.5 միավոր), Կոնգոն (36.1 միավոր), Հայիթին (36.3 միավոր) և Մոզամբիկը (38.1 միավոր)[19]։

Ամփոփելով կարող ենք նշել, որ Հայաստանի Հանրապետության պետության անգործունակության ընդհանուր ցուցիչը թեև որոշ չափով բարելավվել է վերջին 6 տարում՝ 69.7-ից դառնալով 64.2, այդուհանդերձ մեր երկրի դիրքը վարկանշավորման ցուցակում չի փոխվել։ Ենթացուցիչների միտումների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հատկապես պետք է ուշադրություն դարձնել «տնտեսական անկում», «ուղեղների արտահոսք», «պետական լեգիտիմություն», «մարդու իրավունքներ և օրենքի գերակայություն» ենթացուցիչների բարելավմանը։ Կոռուպցիայի ընկալման համաթվի առումով վերջին 2 տարիներին որոշակի առաջընթաց է արձանագրվել, և պետք է ընդունել, որ 2018 թ. քաղաքական իրադարձություններն են դրա հիմնական պատճառը։ Գլոբալ մրցունակության համաթվի առումով Հայաստանի Հանրապետության դիրքերը թուլանում են «տեղեկատվական տեխնոլոգիաներ», «առողջապահություն», «կրթություն», «ապրանքների շուկա» և «նորարարության կարողություն» ենթացուցիչների մասով։ Ուստի պետական տնտեսական քաղաքականությունն իրականացնելիս հարկ է պատշաճ ուշադրություն դարձնել այս բաղադրիչների բարելավմանը։

КАРЛЕН ХАЧАТРЯН – ***О методологии оценки состоятельности государства.*** **–** В последние десятилетия дискуссии о состоятельности государства приобрели актуальность в связи с необходимостью эффективного выполнения функций государства, актуальностью решения проблем, стоящих перед государством и обществом. Разные исследователи и институты предлагают разные подходы к определению степени состоятельности с использованием разных индикаторов и индексов. В настоящей статье обсуждаются три наиболее распространен-

[19] Տե՛ս նույն տեղը, 2019, էջ 407-409։

ных подхода к оценке уровня дееспособности государства: индекс недееспособности государства, индекс восприятия коррупции и индекс глобальной конкурентоспособности. Становится ясно следующее: позиция Республики Армения по индексу недееспособности государств не изменилась за последние 6 лет; с точки зрения индекса восприятия коррупции, за последние два года был достигнут некоторый прогресс за счет политических событий 2018 года; позиция Республики Армения по индексу глобальной конкурентоспособности ослабевает, особенно с точки зрения информационных технологий, здравоохранения, образования, товарного рынка и инновационного потенциала.

Ключевые слова: *состоятельность государства, экономическая политика, государственное регулирование, индекс недееспособности государства, индекс восприятия коррупции, индекс глобальной конкурентоспособности*

KARLEN KHACHATRYAN – *On the Methodology of the Assessment of State Capacity*. – In recent decades, discussions about the viability of the state have become topical in connection with the need to effectively perform the functions of the state, the urgency of solving the problems the state and society face. Different researchers and institutions offer different approaches to determining the degree of consistency using various indicators and indexes. This article discusses three of the most common approaches to assessing the level of state capacity: the Fragile States Index, the Corruption Perception Index, and the Global Competitiveness Index. As a result, it became obvious that the position of the Republic of Armenia on the Fragile States Index has not changed in the period of the last six years, some progress has been registered in the last two years in terms of the Corruption Perceptions Index due to the political events of 2018, and the position of the Republic of Armenia in Global Competitiveness Index is weakening, especially in terms of information technology, healthcare, education, product market, and innovation capacity.

Key words: *state capacity, economic policy, state regulation, Fragile States Index, Corruption Perception Index, Global Competitiveness Index*